ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև 2009 թվականի հունիսի 21-ի՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին Փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին 2009 թվականի հունիսի 21-ին ստորագրված Փոխըմբռնման հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) 10-րդ հոդվածը,

ցանկանալով խրախուսել երկու բարեկամ երկրների միջև երկկողմ հարաբերությունների հետագա զարգացումը,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

1. Հուշագրի անվանումը շարադրել հետևյալ կերպ.

«Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև քաղաքացիներին մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին»:

2. Նախաբանի 3-րդ պարբերությունից հանել «դիվանագիտական անձնագրեր ունեցող» բառակապակցությունը:

3. Հուշագրի 1-ին և 2-րդ հոդվածները շարադրել հետևյալ կերպ.

«Հոդված 1

Սույն Հուշագրի համաձայն՝ մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատված անձնագրեր են համարվում երկու երկրների վավերական՝ դիվանագիտական, հատուկ, պաշտոնական և սովորական անձնագրերը:»:

«Հոդված 2

1. Կողմերը կթույլատրեն Հուշագրի 1-ին հոդվածում նշված՝ 6 ամսից ոչ պակաս վավերականության ժամկետով անձնագրեր ունեցող իրենց քաղաքացիներին մուտք գործել, դուրս գալ և տարանցմամբ տեղաշարժվել իրենց համապատասխան երկրների տարածքներով՝ առանց մուտքի արտոնագրի և վճարի:

2. Սույն Հուշագրի 1-ին հոդվածում նշված անձնագրերն ունեցող Կողմերի քաղաքացիներին թույլատրվում է գտնվել մյուս Կողմի երկրի տարածքում առավելագույնը 90 օր ժամկետով:»:

Սույն Արձանագրությունը Հուշագրի անբաժանելի մասն է և ուժի մեջ է մտնում Հուշագրի 11-րդ հոդվածով նախատեսված կարգով: Սույն Արձանագրությունը կնքվում է Հուշագրի գործողության ժամկետով, և դրա գործողությունը դադարում է Հուշագրի գործողությունը դադարեցնելու հետ միասին:

Կատարված է Աբու Դաբի քաղաքում, 2023 թվականի սեպտեմբերի 7-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Արձանագրության մեկնաբանության շուրջ տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայությունը տրվում է անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	**ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023թ. սեպտեմբերի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև 2009 թվականի հունիսի 21-ի՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին Փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝

Նելլի Սարոյան